

ՀԱՊՈՒՅՆ ՄԻ ՍՈՎՈՐՈՒՅԹԻ ԱՐՁԱԴԱՆՔՆԵՐԸ ՀԱՅ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հին աշխարհի որոշ ժողովուրդների կենցաղում, ըստ պատմագրական, ազգագրական և բանահյուսական աղբյուրների վկայության, գոյություն է ունեցել անաշխատունակ մեծահասակներին մահվան դատապարտելու սովորույթ։ Ժողովրդագետները պարզել են, որ այդ սովորույթը կենցաղավարել է նախնադարյան-տոհմատիրական հասարակարգի պայմաններում, երբ արտադրողական ուժերի ցածր մակարդակը չի կարողացել նյութական միջոցներով ապահովել հասարակության անաշխատունակ անդամներին, և հասարակությունն աղատվել է նրանցից դանազան միջոցներով մահվան դատապարտելով։ Այդ երևույթը բավականին տարածված է եղել և XIX դարից սկսած ուսումնասիրվում է զանազան առումներով¹։

Աշխարհի ժողովուրդների բանահյուսության մեջ անհիշելի ժամանակներում ներթափանցել են հիշյալ սովորույթի վերացման վերաբերյալ որոշ արձագանքներ։ Մի քանի սյուժեների միջոցով, ժողովրդական մտածողությամբ ու տրամաբանությամբ պատճառաբանվել ու արդարացվել է անաշխատունակ մեծահասակների ապրելու իրավունքն ու հասարակական անհրաժեշտությունը։

Հայ ժողովրդի բանահյուսական ժառանգության մեջ ևս պահպանվել են տարբեր ժանրերի մի շարք ստեղծագործություններ (ավանդություններ, հեքիաթներ, զրույցներ, առակներ), որոնք առնչվում են հիշյալ սովորույթի վերապրուկներին, դրանց վերացման ու հետագա վերաիմաստավորման հանգամանքներին։

Ավանդական զրույցները (ութ տարբերակ), գրաված Արցախից, Սյունիքից, Վասպուրականից, Զավախքից, Մոկսից, Կարինից², աչքի են

ընկնում խնդրո առարկա սովորույթի հետ ունեցած իրենց անմիջական կապով։ Այս նյութերի սյուժեն պարզ է. մատնանշվում է հիշյալ սովորույթի գոյության փաստը և վերջինիս վերացումը։

Պարզագույն սյուժեն գրի է առնված 1885 թ. Ն. Մաքսուդյանի կողմից. «Մարդ մը խիստ ծերացած ըլլալով իր տղան զինքը կը դնէ կողովի մէջ և կառնէ սարի մը գլուխը կը ձգէ ու դառնա, կողովը այնտեղ թողլով, ծերունին կը պոռա, թե որդի, դարձիր, կողովդ քեզ հետ տար, քեզ ալ պետք կուգա, տղան մտածելով թե մարդ իր տվածը միշտ կը քաղէ, կը դառնա իր հայրը շալակելով նորին տունը կը բերնա³։

Մոկս գավառում գրաված ավանդությունը պատճառաբանում է սովորույթի գոյությունը։ Կարճկանցիք երկար էին ապրում և երբ ճմռռնում էին մեռնելը՝ բռն էին դառնում ընտանիքի համար. որդիները նրանց դնում էին կողովի մեջ, տանում մի ժայռից ձորը գլորում։ Մի անգամ, Վարդան անունով մի տղա, իր դառամյալ հորը տանում է, որ ձորը գլորի. հրաժեշտի պահին հայրն ասում է որդուն՝ կողովը տար, քեզ պետք կգա։ Որդին հասկանում է հոր ակնարկի իմաստը և նրան նորից տուն է բերում ու պահում մինչև բնական մահը⁴։

Այս սյուժեն գրեթե նույնությամբ հանդես է գալիս Արցախում գրի առնված ավանդական զրույցներում⁵։ Մի տարբերակում միայն մայրն է դիմում որդուն, որ մեծահասակ ու անուժ հորը տանի, կորցնի։ Կրկնվում է նույն վերջաբանը. հայրն առաջարկում է վերցնել, տուն տանել ճվարանը՝ կողովը⁶։

ՀԱԻԲԱ), FF II 8929, FF III 6302. FF V 7645, FF VI 5526։ Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (այսուհետև ԳԱԹ), Գ. Սրվանձտյանի ֆոնդ, գործ 4. N: 29։ Ե. Լալայան, Զավախք. «Ազգագրական հանդես», գիրք Ա, Շուշի, 1896, էջ 277։ 2. Մկրտչյան, Կարնո բարբառ, Երևան, 1952, էջ 108—109 և հտ.։

4 ԳԱԹ, Գ. Սրվանձտյանի ֆոնդ, գործ 4. N: 29։

5 ՀԱԻԲԱ, FF III 6302։

6 Նույն տեղում, FF II 8929, FF V 7645, FF VI 5526։

7 Նույն տեղում, FF V 7645։ Այս ավանդական զրույցի մի տարբերակը մշակել է Ավ. Իսահակյանը «Մայրը» բալլադում։ Վարպետի գրչի տակ զրույցի սյուժեն ունի բոլորովին տարբեր

¹ «История первобытного общества». М., 1974, էջ 102; Л. А. Файнберг, Возникновение и развитие родового строя, сборник «Первобытное общество», М., 1975, էջ 77։

² В. В. Каллаш, Положение неспособных к труду стариков в первобытном обществе, журнал «Этнографическое обозрение», М., 1889, № № 1, 2, 3, Л. Я. Штернберг, Убийство детей и стариков у первобытных народов, Энциклопедия Брокгауза и Эфрона, т. XXXIV, 1902, էջ 402—404; Н. А. Кисляков, О древнем обычае в фольклоре таджиков, сборник «Фольклор и этнография», Л., 1970, էջ 70—82։

³ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվ (այսուհետև 18*

Մոկսի տարրերակի սյուժեն անփոփոխ հանդես է գալիս իրրև սկիզբ մի իրապատում հեօիաթի, գրի առնված իջևանում, որդին հորը տանում է, որ թողնի սարում, ծմակում: Հոր ասածի ազդեցությամբ հետ է բերում և պահում ծածուկ, որովհետև թագավորի հրամանով բոլոր անաշխատունակ մեծահասակներին սպանում էին՝:

Այս սովորույթը հայ բանահյուսության ստեղծագործություններում հիշատակվում է իրրև վաղուց ի վեր գոյություն ունեցած իրողություն, որը սակայն վերացվում է գուտ հոգեբանական, բարոյական գործոնի ազդեցությամբ: Որդիները հայրերի ականարկից հասկանում, գուշակում են իրենց սպասվող ապագան, զղջում են ու դրանից հետո պահում ու խնամում են հայրերին մինչև նրանց բնական մահը: Խոսքն այս նյութերում մասնավոր փաստերի մասին է և, հավանաբար, այս պատճառաբանությունը դրսևորում է տոհմա-ազգակցական կապերի գիտակցման նոր աստիճան, երբ հայրական իշխանությունն աստիճանաբար սկսում է ուժեղանալ:

Հայկական զրույցներն ունեն իրենց զուգահեռները տարբեր ժողովուրդների բանահյուսության մեջ: Հին հույները Պաոնասում գտնվող մի ժայռ կոչում էին «ծերերի ժայռ» և, ըստ ավանդության, այդ ժայռից ցած էին նետում հասարակությանը ոչ պիտանի ծերերին⁹: Տափկները հին ժամանակներում սովորություն ունեին ծերերին տանելու և թողնելու մի քարայրում, մի քանի օրվա ուտելիքի պաշարով, որի սպառվելուց հետո նրանք սովամահ էին լինում: Ըստ ավանդական զրույցի, երկու եղբայր իրենց ծերացած հորը տանում են, որ թողնեն քարայրում: Երբ հայրն ականարկում է, թե նրանց էլ նույն ապագան է սպասում, ազդված այդ մտքից եղբայրները հորը տուն են բերում և լավ խնամում մինչև նրա բնական մահը¹⁰:

Անաշխատունակ մեծահասակներին ժայռից

իր ժամանակի բարոյական ըմբռնումներին համապատասխան իմաստ ու մեկնաբանություն: Գուցե դա գալիս է նրա բանահյուսական աղբյուրից: Այն գրի չի առնվել վարպետի կողմից: Այնուհանդերձ բալլադն արտահայտում է նրա գեղագիտական հավատամքը, որ հատուկ տեղ են գրավում մայրապաշտական մոտիվները:

9 ՀԱԻԲԱ, է. Խեմշյանի հավաքածու:

10 В. В. К а л л а ш, նշվ. աշխ., «Этнографическое обозрение», 1889, № 2, էջ 168:

11 М. С. Андреев, Таджики долины Хуф, Сталинабад, 1953, էջ 209—210; И. А. К и с л я к о в, О древнем обычае в фольклоре таджиков, էջ 71—72:

նետելու մասին արձագանքներ են պահպանվել աղիգեյների բանահյուսության մեջ¹¹: Միահյուսված լինելով հեթաթային սյուժեին, այդ արձագանքները շեշտում են սովորույթի վերացման սոսկ բարոյական, մարդկային հանգամանքը:

Հայ բանահյուսության մեջ պահպանվել են մեծ թվով ստեղծագործություններ, որոնք նյութ են տալիս հիշյալ սովորույթի գոյության ու վերացման հասարակական պատճառաբանվածության վերաբերյալ: Անշուշտ, ազգակցական, արյունակցական կապերի գիտակցումը համայնքի ներսում կատարել է իր դերը, սակայն հիմնականը տնտեսական-հասարակական գործոնն է: Համայնքը զարգացման նոր, ավելի բարձր աստիճանում գիտակցում է ոչ միայն ֆիզիկապես առողջ ու կարող անդամների, այլև ֆիզիկապես թույլ մեծահասակների փորձի, հմտության, խոհեմության, գիտելիքների անհրաժեշտությունը: Այս հանգամանքը հատկապես ընդգծվում է մի իրապատում հեթաթում, որ շեշտվում է մեծահասակներին դատապարտելու սովորույթի վերացման հասարակական հիմքը և այն տրվում է ժողովրդական մտածողությամբ ու տրամաբանությամբ հիմնավորված ընդարձակ սյուժեի միջոցով: Այս առնչությամբ օգտագործված են հեթաթի ինը տարբերակները, գրի առնված Արցախ—Տավուշից, Գուգարքից և Արևմտյան Հայաստանի գավառներից¹²:

Մի երկրի թագավոր հրամայում է սպանել իր տերության բոլոր ծերերին: Այսօրինակ հրամանը որոշ տարբերակներում պատճառաբանվում է. ծերերը ո՛չ կռվել կարող էին, ո՛չ էլ աշխատել¹³ և «ջոջություն» էին անում¹⁴: Թագավորի ասածն իրագործվում է, բայց մի հայրասեր որդի ծածուկ պահում ու խնամում է հորը: Մի անգամ երկիրը պաշարվում է թշնամիներից (տարբերակ՝ այդ երկրում հայտնվում է մի վիշապ, գազան), թշնամին առաջարկում է բարդ հանելուկ, որը շուտով լուծվում չէ և հարձակվելու և ավերելու է երկիրը (տարբե-

11 Ф. П л о с к о в, Лазаревское взморье, Краснодар, 1967, էջ 75—79:

12 ԳԱԹ, Ս. Հայկունու ֆոնդ, № 4: ՀԱԻԲԱ, FF III 7512—7514, FF V 0409, FF VII 7289, FF V 2806—2810: «Հայ ժողովրդական հեթաթներ», հատ. VI, Երևան, 1973, էջ 95—99: «Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունը», Երևան, 1971, էջ 290—293: ՀԱԻԲԱ, Բ. Ղադիյանի և է. Խեմշյանի հավաքածուներ:

13 «Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունը», էջ 291:

14 ԳԱԹ, Ս. Հայկունու ֆոնդ, № 4: «Հայ ժողովրդական հեթաթներ», հատ. VI, էջ 95:

րակ՝ զաղանք, հրեշք, մեծ ավերածություններ է անում և ոչ ոք չի կարողանում կռվել նրա դեմ ու դուրս քշել երկրից)։ Իր թաքստոցից ձեր հայրը խորհուրդ է տալիս, թե ինչպես լուծել հանելուկը (ինչպես հաղթել զաղանին, հրեշին)։ Որդին, հետևելով հոր խորհրդին, հասնում է հաղթանակի ու ազատում երկիրը։ Թագավորը հետամուտ է լինում և իմանում ճշմարտությունը։ Դրանից հետո նա վերացնում է ծերերին սպանելու իր հրամանը։

Այս հեքիաթի տարբերակները հայտնի են համաշխարհային բանահյուսությունից (ռուսական, էստոնական, լիտվական, շվեդական, հրեական, ֆրանսիական, իսպանական, իտալական, ռումինական, սլովենական, սերբա-խորվաթական, հնդկական, չինական) 15։ Մյուսին ունի հետևյալ պատկերը։ Մի թագավորության մեջ սպանում են բոլոր ծերերին։ Մեկը զաղտնի պահում է իր հորը։ Երբ երկրի գործերը վատ են գնում երիտասարդ տիրակալների ձեռքում, ծեր հայրը հայտնվում է, լուծում թշնամու առաջադրած խնդիրը և այդպիսով օգնում իր երկրին։ III դարի հռոմեական գրող Մարկոս Ֆլակոսը հաղորդում է մի գրույց, ըստ որի երբ Հռոմը ազատագրվում է գալլերից, ուտելիքի պակասության պատճառով գետն էին նետում 60-ից բարձր տարիք ունեցողներին։ Մեկը քարայրում թաքցնում է իր հորը, որը այնտեղից հետագայում որդու միջոցով օգնում է Հռոմին։ Երբ ամեն ինչ պարզվում է, որդուն և հորը ներում են, իսկ քարայրը կոչում են Արկեյ՝ պահում եմ 16։ Արկեյների բանահյուսության մեջ պահպանվել է հետևյալ ավանդական գրույցը։ Հնում սովորություն է եղել տոհմին օգուտ չբերող ծերերին ժայռից գետը նետել։ 30-ամյա հորը որդին տանում է, որ ժայռից դետը նետի։ Ճանապարհին որդու ոտքը կպչում է քարի և նա ընկնում է։ Հայրը կամացուկ ծիծաղում է, որդու հարցին, թե ինչու է ծիծաղում, պատասխանում է, որ իր հորն այստեղ բերելու ժամանակ իր հետ էլ նույն բանն է տեղի ունեցել։ Հասկանալով հոր ակնարկը, որդին նրան թաքցնում է մոտակա մի քարայրում։ Որոշ ժամանակ անց ծերունին փրկվում է իր տոհմակիցներից օտար նվաճողներից։ Այնուհետև ծերերին ժայռից չեն նետում, այլ շրջապատում են հարգանքով ու սիրով 17։

15 S. I. Thompson, The types of the folktale, № 981, Н. П. Андреев, Указатель сказочных сюжетов по системе Антти Аарне, Л., 1929, № 981.

16 В. В. Каллаш, *Եզդ. աշխ.*, «Этнографическое обозрение», 1889, № 2, էջ 139.

17 Ф. Плосков, *Եզդ. աշխ.*, էջ 76—79.

Ազրբեջանական ՍՍՀ Շահումյանի շրջանում վերջերս գրի է առնվել մի հայկական հեքիաթ 18, որի տարբերակները հայտնի են նաև ուրիշ ժողովուրդների բանահյուսությունից։ Ըստ այդ հեքիաթի Ղրիմի խանը հրամայում է կոտորել իր երկրի մեծահասակներին, որովհետև նրանք բեռ էին դառել իրենց անկարողությանը։ Մեկը թաքցնում է իր հորը։ Մի անգամ թագավորի ծառաները ձիերը տանում են ջրելու, ձիերը խրտնում են ջրի մեջ երևացող ինչ-որ փայլից։ Ոչ ոք չի կարողանում հասկանալ զաղտնիքը։ Երբ հայրը իր թաքստոցից խորհուրդ է տալիս բարձրանալ ջրի վրա հակված ծառը և արծվի բնում փնտրել զաղտնիքի բացատրությունը։ Հետևելով հոր խորհրդին, որդին արծվի բնում հայտնաբերում է մի թանկագին քար, որի փայլը արտացոլվում էր ջրում։ Թագավորը զխի է ընկնում, որ տղան իր սեփական խելքով չէր կարող այդ անել, իմանում է ճշմարտությունը և ներում շնորհում բոլոր մեծահասակներին։ Տաշիկական հեքիաթում նույն միջադեպը ծավալվում է ու զարգանում աննշան տարբերություններով։ Հին ժամանակներում սովորություն կար սպանելու մեծահասակներին։ Մի հայրասեր որդի թաքցնում է իր հորը։ Մի անգամ քաղաքի օրհորում մի փայլուն բան է հայտնվում։ Բոլոր նրանք, ովքեր փորձում էին բացատրել, չէին կարողանում և թագավորը սպանում էր դրանց։ Հոր խորհրդին անսալով որդին բարձրանում է ջրհորի վրա հակված ծառը և արագիլների բնում հայտնաբերում մի թանկագին քար, որի փայլը ջրհորում երևում էր։ Թագավորը իմանում է ճշմարտությունը և վերացնում ծերերին սպանելու իր հրամանը 19։

Վերը քննարկված հայկական հեքիաթի տարբերակներից մեկը, ենթարկվելով ժամանակաշրջանի ազդեցությանը, ստացել է բարոյախոսական երանգավորում 20։ Հեքիաթի վերջում պարզվում է, որ թագավորը հրաման է արձակել մեծահասակներին սպանել նրանց որդիներին փորձելու նպատակով։ Եվ երբ հանելուկը լուծած որդին կախաղանի սպառնալիքով անդամ չի խոստովանում, թե ով է իր խորհրդատուն, թագավորը զոգնում ու խրախուսում է նրան, պարսավում հայրերին սպանող որդիներին։ Մնացած տարբերակները հանգեցնում են այն եզրակացությանը, որ թագավորը գիտակ-

18 ՀԱԻԲԱ, Բ. Ղազիյանի հավաքածո։

19 М. С. Андреев, Таджики и доджиклы, стр. 210—211.

20 ՀԱԻԲԱ, FF V, 2806—2810.

ցում է մեծահասակների փորձի ու խելքի արժեքը ու այդ պատճառով վերացնում իր նախկին հրամանը:

Հասարակության զարգացման առաջընթացը և մոնոգամ ընտանիքի հստակ կազմավորումը իրենց հետ բերում են գիտակցության նոր ձևեր: Հին ու նոր սովորությունները այնպես են ներթափանցվում, որ հաճախ դժվար է լինում որոշել, թե որտեղ է վերջանում մեկը և սկսվում մյուսը: Հայրը դառնում է ընտանիքի գլխավորը և յուրաքանչյուր մեղանշում հայրական իշխանության դեմ համարվում է դատապարտելի: Բանահյուսական ստեղծագործություններում այս երկարատև ընթացքը դրսևորվում է հոր և որդու կոնկրետ փոխհարաբերության միջոցով, ընդգծվում է այդ փոխհարաբերության բարոյական կողմը. պետք է լսել ու հնազանդվել հայրերին, հակառակ դեպքում որդիները պատժվում են և՛ նյութապես, և՛ բարոյապես:

Ս. Հայկունու գրի առած ավանդական զրույցն իր ու մեծ սուլթանի մեջ միահյուսել է հին սովորության արձագանքն ու նոր ժամանակների բարոյական-հասարակական ըմբռնումները²¹: Մոտեցնում երիտասարդները չեն ենթարկվում մեծերին, ուզում են իրենք իշխել և կոտորում են բոլոր ասպիտակ մորուքավորներին: Թագավորն իմանում է, զայրանում և Մոտեցնում ուղարկում իր խելացի հազարապետին, որ գնա և պատժի երիտասարդներին: Սա գալիս ու առաջարկում է մի խնդիր՝ աղն ինչպե՞ս զերծ պահել որդնոտելուց. չլուծելու դեպքում բոլորին պետք է սպանեն: Երիտասարդները չեն կարողանում. նրանց փրկում է մի ծեր մարդ, որին չէր սպանել ջահել որդին, պահել էր մեղվի փեթակում: Հայրն ասում է, որ երբ աղը որդնոտում է, պետք է լվանալ ջորու կաթով: Հազարապետը ներում է երիտասարդներին և ասում, որ այլևս ալդալիսի բան չանեն. ծերերին պետք է վերաբերվել մեծագույն հարգանքով. այս է զրույցի բարոյախոսությունը:

Այս սոցիալական հետաքրքրություն է ներկայացնում իրապատում մի հեքիաթ ևս, որը հայտնի է մի շարք տարբերակներով և որը Արևելյան Հայաստանի ազդագրական շրջաններում առավելապես կապված է Շահ Աբասի, իսկ Արևմտյան Հայաստանում՝ Սուլթան Սուլեյմանի անվան հետ: Այս հեքիաթում հոր և որդու փոխհարաբերությունը, ուր գերապատվությունը տրվում է հայրական խոսքին, իշխանությանը, խորհրդին, ներկայացվում է հավատարիմ ու անհավատարիմ կանանց զործողությունների միջոցով: Օգտագործվել են հեքիաթի տասնհինգ տարբերակները, դրսևորված Արցախ—Տավուշից,

Սյունիքից, Այրարատից, Գուգարքից, Մուշից և այլն²²:

Թագավորը (տարբերակներում՝ Շահ Աբասը), շրջում է իր երկրում և հանդիպում մի սիրով ամուսնական զույգի: Փորձելով ամուսինների հավատարմությունը, թագավորը համոզվում է կնոջ դավաճանության մեջ և հրամայում է կոտորել իր երկրի բոլոր չափահաս կանանց: Հրամանը ի կատար ածող վեզիրն ընկնում է ծանր կացության մեջ: Վեզիրի ծեր հայրը (թագավորի ծեր հորեղբայրը, վեզիրի ծեր դայակը, բոլոր տարբերակներում շեշտվում է նրա ծեր և տղամարդ լինելը, նշվում է նաև տարիքը՝ 90, 100, 110, 120), վեզիրին խորհուրդ է տալիս չկատարել հրամանը և հանձն է առնում գնալ, համոզել թագավորին, որ ետ կանգնի իր որոշումից: Այդպես էլ անում է: Գալով թագավորի պալատը (տարբերակում՝ այնքան ծեր է, որ բերում են) նա պատմում է կնոջ բացառիկ նվիրվածության ու սիրո մասին մի պատմություն, որով կասեցնում է թագավորի հրամանը և պատժել տալիս միայն մեղավորին:

Մեծահասակներին սպանելու սովորույթի վերաիմաստավորման, ժամանակաշրջանի պահանջներին ու բարոյական ըմբռնումներին հարմարվելու ինքնատիպ օրինակ է ներկայացնում Իսլանդիայի Կոֆի գյուղում գրի առնված մի հեքիաթ²³, ուր վերոհիշյալ սովորույթի հիշողություններն ու ուշ շրջանի ներընտանեկան փոխհարաբերությունները միահյուսվել են: Հեքիաթում որդին իր շար կնոջ հետապնդումներից զրգված կույր հորը տանում, թողնում է մի մութ քարայրում և խոստանում շուտ վերադառնալ: Հայրը երկար սպասում է, սակայն որդին չի վերադառնում: Պատահաբար քարայր են մտնում հովիվները և հարց ու փորձ անելով պարզում ճշմարտությունը: Սրանք սկսում են խնամել ծերունուն: Որդին տանջվում է խղճի խայթից, գալիս է կույր հոր հետևից, և համոզում վերջինիս տուն վերադառնալ: Հայրը չի ուզում խախտել տղայի ընտանեկան կյանքի հանգիստը, բայց որդին ստիպում է: Վերադառնալով տուն, նրանք վռնդում են շար կնոջը և իրենք ասլրում սիրով ու համերաշխ:

22 Գ. Ս ր վ ա ն ձ տ յ ա ն, Համով-հոտով, Կ. Պոլիս, 1884, էջ 213—216: ՀԱԻՅԱ FF II 8942—8949, FF V 0241—0245, 0401—0407, 4226—4238, FF VII 1634—1640, 3024—3036, 6489—6496, 7351—7353, FF VIII 607—623, 2535—2551 և այլն:

23 «Հայ ժողովրդական հեքիաթներ», հատ. X, Երևան, 1967, էջ 149—152:

21 ԳԱԹ, Ս. Հայկունու ֆոնդ, № 4:

Մերունուն քարայր տանելու հանգամանքը պատահական չպետք է համարել: Ինչպես նշվեց վերը, որոշ ժողովուրդների մեջ սովորություն է հղել տեղի մեծահասակներին քարայրերը տանել, թողնել:

Հայրերի ու որդիների փոխհարաբերության բարոյա-խրատական կողմն ավելի է ընդգծվում մի իրապատում հեքիաթում, որ նույնպես հայտնի է մի քանի տարբերակներով, գրի առնված Ջավախքից, Գուգարքից, Արցախ—Տավուշից²⁴։ Մեծահասակներին սպանելու սովորույթի հետ այս հեքիաթի աղբյուր մթազնվել է և ներկայացնում է մի միջնորդ օղակ՝ հիշյալ սովորույթի և բարոյախոսականի: Երկու եղբայր բաժանվում են, ամուսնացած եղբայրը կնոջ դրդմամբ վերցնում է ողջ ունեցվածքը, իսկ շամուսնացածը՝ ծեր հորը: Չամուսնացած եղբայրը հեռանում է տվյալ բնակավայրից, հոր խորհուրդների շնորհիվ հասնում մեծամեծ հաջողությունների, տիրանում հարստության, մի տարբերակում՝ ամուսնանում է թագավորի աղջկա հետ և դառնում թագավոր: Մյուս եղբայրը վատնում է ունեցվածքը, դառնում օրավարձով բանվոր (տարբերակում՝ մուրացկան), ընկնելով իր եղբոր բնակավայրը, աշխատանքի է ընդունվում նրա մոտ, չի ճանաչում հորն ու եղբորը, մինչդեռ սրանք ճանաչում են ու օգնում նրան: Հետաքրքրություն է ներկայացնում Գուգարքում գրի առնված տարբերակը, ըստ որի, երբ հայր ու որդի տնից դուրս են գալիս, քնում են անտառում. առավոտյան հայրը իր զլխի տակից հանում, որդուն է տալիս մի քսակ, որի մեջ մի ոսկի կար և ասում՝ տար մանրիկ մոտակայքում: Որդին գնում և հետ է վերադառնում ու երբ քսակը ստուգում է, պարզվում է, որ այնտեղ դարձյալ մի ոսկի կա: Կարծելով, որ մոռացել է ոսկին տալ մանրորդին, ուզում է վերադառնալ, հայրը չի թողնում, ասելով, թե՛ դու ազնվաբար ես վարվում, այդ պատճառով քո քսակում ոսկին անպակաս է լինելու:

Մինչ այս քննարկած բանահյուսական ստեղծագործությունները, բացառությամբ մեկի, որոշակիորեն խոսում են ծեր հոր ու երիտասարդ որդու փոխհարաբերության մասին. որոշ պատումներում եթե դա հայրը չէ, ապա հայրական տոհմին պատկանող մի ծերունի է: Որդին է հորը և՛ ոչնչացնողը, և՛ պահողը, և՛ արդարացնողը: Հավանաբար, այս սյուժեների առաջադրումը կապված է մայրիշխանությունից հայրիշխանությանն անցնելու ժամանակաշրջանի հետ, երբ ընտանիքի, երեխաների կապը հայրական կողմի հետ

հի հետ, երբ ընտանիքի, երեխաների կապը հայրական կողմի հետ դեռևս թույլ էր և գերակշռությունը պատկանում էր մայրական կողմին: Ավանդական դրույցի Արցախի տարբերակում մայրն է տղային դրդում, թե՛ տար, հորդ կորցրու: Այս ժամանակների հետ է երևի կապվում մի շարք առած-ասացվածքների առաջացումը, ինչպես օրինակ՝ «Հերը հարևան, մերը բարեկամ»²⁵, «Հորն եթումը եթում չէ, մորն եթումն ա եթում»²⁶ և այլն: Բանահյուսական ստեղծագործությունները ոչ միայն պահպանել են հիշյալ սովորույթի էվոլյուցիայի արձագանքները, այլև նպատակ են ունեցել նպաստել ամրապնդելու ազգակցական, արյունակցական կապը հայրական կողմի հետ:

Հասարակության, ընտանիքի հետագա զարգացումը բերում է նոր փոխհարաբերություններ և նյութական միջոցների արտադրության բարելավմանը զուգընթաց վերանում է զանազաններին սպանելու սովորությունը, մթազնվում է զանազանների սեռային տարբերությունը: Առաջ է գալիս զուտ բարոյական նշանակություն ունեցող մի հանգամանք՝ որդիների և ծնողների փոխհարաբերությունը: Վերջիններս իրենց ֆիզիկական դրությամբ լինելով անօգուտ վար կացության մեջ, կարոտ են հոգատար, ուշադիր ու ջերմ վերաբերմունքի:

Բանահյուսական բաղմամբով ստեղծագործություններ, գերազանցապես ավանդություններ ու դրույցներ, տարբեր սյուժեների միջոցով արժարժում են այս խնդիրը, միշտ բարոյապես, ֆիզիկապես ու նյութապես պատժում չար, անսիրտ հարսին կամ թույլ ու անհոգի որդուն, ղրանով իսկ մարդասիրական դաս տալիս հասարակության երիտասարդ անդամներին, սովորեցնում խոհմություն, համբերություն, ուշադրություն ու բարություն մեծահասակների հանդեպ:

Այս կարգի նյութերի թվին է պատկանում հետևյալ դրույցը, որը հայտնի է Հայաստանի տարբեր ազգագրական շրջաններում²⁷: Հարսը սկեսուրի դիտողությունները չլսելու համար գցում է նրան թոնիրը և ծածկում: Մեր կիներ թոնիրից հետևում է տան անցուդարձին և տեսնում, որ անասուններից մեկը կրկնապես չվերադարձավ տուն: Այդ անասունի նման ձայն հանելով, նա հասկացնում է տնեցիներին. երբ սրանք զլխի են ընկնում ու դնում հանդ, դայլերն արդեն հոշոտած են լինում անասու-

²⁵ Ա. Ղա ն ա լ ա ն յ ա ն, Առածանի, Երևան, 1960, էջ 259:

²⁶ Նույն տեղում, էջ 266:

²⁷ ՀԱԻՐԱ, FF VI 6666. Բ. Ղադիյանի հավաքածու:

²⁴ ՀԱԻՐԱ, FF V 2854—2862, FF VI 7078—7094, FF VII 1672—1675. Բ. Ղադիյանի հավաքածու:

նին: Դրանից հետո ծեր կնոջը տուն են բերում, լսում խորհուրդներն ու հաշվի առնում դիտողությունները:

Ըստ Մոկսում գրի առնված մի զրույցի²⁸, որը իր զուգահեռներն ունի ուրիշ ժողովուրդների բանահյուսության մեջ²⁹, մի ընտանիքում մեծահասակ պապին ճաշ են տալիս փայտե պնակից. նրա ձեռքերը դողում էին և կավե պնակներն անընդհատ ձեռքից ընկնում, կոտրվում էին: Մի անգամ Լրեխան փայտ է տաշում և հոր հարցին, թե ինչ է անում, պատասխանում է, թե նրա համար փայտե պնակ է շինում, որ երբ ծերանա, այդ պնակով ճաշի: Երիտասարդ հայրը, ազդված իր տղայի խոսքից, կարգադրում է պապիկին ճաշ տալ նախկին ձեռքով³⁰:

²⁸ ՀԱԻԲԱ, FF III 6303:

²⁹ Н. П. Андреев, *Եզվ. աշխ.*, № 982:

³⁰ Այս սյուժեն մշակված է Լ. Տոլստոյի *Կողմից*:

Ինչպես տեսնում ենք, այստեղ ևս հիմնական դեր խաղացողը բարոյական գործոնն է. գալիքը վախեցնում է Լրիտասարդ հորը և նա փոխում է իր վերաբերմունքը: Դա վերաիմաստավորումն է այն նախնական պարզ սյուժենների, որոնց մասին խոսք եղավ սկզբում և որոնք ստացել են ժամանակակից ըմբռնումներին համապատասխան միտվածություն. եթե որդիները վատ են իրենց ծնողների նկատմամբ. ապա նրանց որդիներն էլ հետագայում նույն կերպ են վարվելու իրենց հետ:

Այսպիսով, քննարկված բանահյուսական ստեղծագործություններն իրենց ամբողջությամբ մեջ որոշ չափով արտացոլում են մարդկային հասարակության առաջընթացի տրամաբանությունը՝ հասարակության մի մասը կազմող մեծահասակների դերի ու տեղի վերաբերյալ:

Ա. ՂԱԶԻՅԱՆ:

ԱՆՏԻԿ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ԶՈՀԱՍԵՂԱՆ ԴՎԻՆԻՑ

Դվինի թանգարանում պահվում է մի ինքնատիպ հուշարձան, որ հայտնաբերվել է Դվին քաղաքի տարածքից¹: Դա որձաքարե քառանկյուն մի զոհասեղան է՝ 55 սմ բարձրությամբ, միջին մասում նեղացող (17,5×17,5), հիմքում (25×15) և վերին մասում (25×11) լայնացող ուրվապատկերով: Զոհասեղանի բավական լավ մշակված յուրաքանչյուր կողմի մակերեսի կենտրոնում քանդակված են տարբեր պատկերներ. մի կողմում ուռուցիկ մակերեսով սկավառակ է, որի կենտրոնը փոս է ընկած, հակառակ կողմում՝ պատմանդանին կանգնած թուռն, մյուսում՝ ցլի գլուխ, կիսալուսնաձև եղջյուրներով, իսկ շորթորդ կողմում՝ կարիճ, շոշափուկներով կլոր գունդ բռնած (նկ. 1—4):

Դվինի զոհասեղանը իր արտաքին ձևով, մասամբ նաև շափերով, ազդարարում է հյուսիս-մերձսևծովյան բնակավայրերից (Խարաբս, Խերսոնես) հայտնաբերված, հռոմեական ժամանակաշրջանին պատկանող, տեղական սարմատական կրաքարից քանդակված համանման հուշարձաններին, ինչպես նաև հռոմեական կայսրության ընդարձակ սահմաններում լայնորեն տարածված նմանաձև կոթողներին. այն միաժամանակ հիշեցնում է անտիկ ժամանակաշրջանի փոքրասիական և Արևելյան Երանում

(Քյուհ-ի Քհվաղչահ) Արշակունի թագավորի կառավարչի պալատի հրո տաճարի զոհասեղանները²:

Նաևայն քննվող հուշարձանի էությունը բացահայտվում է բարձրաքանդակ պատկերների շնորհիվ, որոնց քննարկումը հանգեցնում է մի որոշակի հետևություն:

Իրանական Միհր կամ Միթրա աստվածության պաշտամունքը դեռևս մ. թ. ա. I քարում ներթափանցելով Արևմուտք՝, մասնավորապես հռոմեական կայսրության սահմանները, արագությամբ ձեռք է բերում անթիվ երկրպագուներ:

2 М. Н. Ростовцев, Святители фракийских богов и надписи бенефициариев в Ай-Тодоре («Известия археологической комиссии», вып. 40, 1911, էջ 1—42, նկ. 5, նկ. 6); Э. Н. Соломоник, Алтарь Немеиды из Херсонеса («Вестник древней истории», 1960, № 2, էջ 133—139, նկ. 1); Fr. Cumont, Die Mysterien des Mithra, Leipzig, 1911, էջ 128, ֆիգ. 6; L. A. Campbell, Mithraic iconography and ideology, Leiden, 1968; տախտ. XXIX, XXXI; E. Lane, Corpus monumentorum Religiones dei Mennis, I, Leiden, 1971, ֆիգ. 121, 125, L. Vanden Berghe, Archeologie de l'Iran ancien, Leiden, 1959, էջ 16, տախտ. 15c:

³ Plutarch's, Lives, London, 1959, էջ 175:

¹ Այս նյութը ժամանակին մեզ տրամադրել էր Դվինի արշավախմբի ղեկավար պրոֆ. Կ. Գ. Ղաֆադարյանը: